«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում

Հետազոտող ուսուցիչ՝ Անի Հովհաննիսյան .....
անուն, ազգանուն

Զորավար Անդրանիկ Օզանյանի անվան N 5 դպրոց.....
դպրոց

Մենթոր ուսուցիչ՝ Արմինե Անտոնյան _____
անուն, ազգանուն

ԱՐՄԱՎԻՐ- 2022

«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

Բովանդակություն

Ներածություն

Գրական ակնարկ

Մաս1:

Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում

Մաս 2:

Կրտսեր տարիքում բարոյագիտական պատկերացումների ձևավորումը խաղերի միջոցով

Եզրակացություն

Գրականություն

Ներածություն

Մարդկությունը գնում է դեպի ապագան՝ անցյալին ուղղված հայացքով:

Ֆերերո

Մեր երկրում աշակերտների արժեքային համակարգի ձևավորումը ներառված է Հայաստանի Հանրապետության պետական չափորոշչում՝ որպես հենց կրթության բովանդակային բաղադրիչ: Յուրաքանչյուր ուսումնական առարկայի մասով սովորողների պատրաստվածությունը ներկայացվող գիտելիքային պահանջների մեջ առանձին կետով նաև նշվում է արժեքները և դրանց ձևավորումը,որոնք պետք է տա դպրոցը:

«Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար:

Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների:Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակույթային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները:

Նոր սերնդի արժեհամակարգի ձևավորման, կրթության և դաստիարակության գործում լուրջ անելիքներ ունի հայ դպրոցը, որի գերնպատակն է կերտել բարոյական, ազգային արժեքներով օժտված, ազգային նկարագիր ունեցող սերունդ: Այս նպատակն իրագործելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել ու կատարելագործել ոչ միայն հայրենի և համաշխարհային

գիտությունների ճյուղերը, այլև մանկավարժության անցյալի ժառանգությունն ու նրա ժամանակակից փորձն ու մեթոդաբանությունը: Ժամանակակից դպրոցի կարևորագույն առաքելություններից մեկն էլ երեխայի մեջ իր ազգին բնորոշ բարոյական և հոգևոր արժեքների ձևավորումն ու զարգացումն է: Նրա խնդիրն է պահպանել և փոխանցել այն արժեքները, որոնք ժառանգել ենք մեր նախնիներից, և որը մեր անխառն ինքնատիպությունն է համաշխարհային մշակույթի բազմերանգության ու բազմազանության մեջ: Ուստի 21-րդ դարի դպրոցում դաստիարակության և կրթական գործընթացի ճիշտ կազմակերպման համար շատ կարևոր են ոչ միայն համամարդկային,այլև հայրենի մշակույթի բարձրարժեք ստեղծագործությունների ուսումնասիրումն ուուսուցումը: Այդ ստեղծագործություններում արտահայտված են մեր ժողովրդի հոգեկերտվածքը, աշխարհընկալումը, մարդասիրական գաղափարներն ու գալիքի երազանքները: Հայ ժողովրդի ավանդույթներում է, որ վառ կերպով արտացոլված են մեր ազգի ազգային հավաքական բնույթը, անդրդվելի կամքը, ներքին զորությունն ու հնարավորությունները, ապրելու, վերածնվելու և հարատևելու ունակությունը, ազգերի պատմության մեջ իր արժանի տեղն ունենալու ձգտումը: Այս ամենն է, որ անհրաժեշտ է ավանդել ժամանակակից էթնոկրին: Այդպես նա պիտի հասնի այն գիտակցության, որ հասարակական կյանքի առաջընթացը պայմանավորված է համախըմբվածությամբ, գիտելիքների բարձր մակարդակով ու մշակութային արժեքների ոչ միայն ստեղծմամբ, այլև պահպանմամբ: Սերունդ, որը կկարողանա շարունակել ազգային լավագույն ավանդույթները, աշխարհին ու մարդկությանը ցույց տալ իր մշակութային հարստությունն ու բարոյա-հոգեբանական արժանիքները:

«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

Գրական ակնարկ

Մասնագիտական գրականության վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ յուրաքանչյուր հասարակություն, սոցիալական խումբ, հասարակական խմբավորում ստեղծում է իրեն հատուկ ընդհանուր և յուրահատուկ արժեքային համակարգեր և վարքականոններ, որոնք արտահայտում են նրանցում գերակայող հետաքրքրությունները և նպատակները: Այդ հասարակությանը պատկանող մարդը ընդունում է դրանք որպես իր վարքի չափանիշ:

Անձնային արժեքը մարդու մասին գիտությունների՝ փիլիսոփայության, հոգեբանության, մանկավարժության, սոցիոլոգիայի և այլ գիտությունների կարևոր խնդիրներից մեկն է:

Անձի արժեքային համակարգի ձևավորման և շարժընթացի խնդիրը ընդունված է դիտարկել հոգեկան զարգացման ընդհանուր օրինաչափությունների համատեքստում: Այն անմիջա-կանորեն կապված է տարիքային զարգացման առանձնահատկությունների հետ: Վերլուծելով անձի իմաստային ոլորտի ձևավորման և զարգացման խնդիրը՝ Ա. Սեռին պնդում է, որ այդ գործընթացները արտացոլում են տարիքային և անձնային զարգացման ընդհանուր օրինաչափությունները: Դ.Լեոնտևը նշում է, որ յուրաքանչյուր անձի զարգացման գործընթաց բնութագրվում է սոցիալական հանրության արժեքների և դրանց փոխակերպումների, այսինքն՝ անձնային արժեքների կերպափոխմամբ :Տվյալ խնդիրը ներկայացվել է հոգեբանության տարբեր դպրոցների և ուղղությունների ներկայացուցիչների կողմից: Ռուսական հոգեբանության մեջ այս խնդրին անդրադառնում են Վ. Ալեքսեևան, Ս. Բուբնովան, Գ. Բուդինայտեն, Տ. Կոռնիլովան, Ա. Վոլոչկովը, Ե. Երմոլենկոն, Դ. Լեոնտևը, Ա. Սեռին, Վ. Չուդնովսկին, Մ. Յանիզկին և ուրիշներ: Որպես անձնային արժեքների ձևավորման նախադրյալներ՝ դիտարկվում են սոցիալականացման առանձնահատկությունները, տարիքային զարգացման փուլերը, երեխայի ինտելեկտուալ զարգացումը,կրթությունը, տեղեկույթը, մակրո- և միկրո-միջավայրի առանձնահատկությունները: Անձի արժեքային համակարգի ձևավորումն իրականանում է մի շարք գործոնների ազդեցությամբ: Այդ գործոններն են ընտանիքը, հասարակությունը, դպրոցը, շրջապատի սոցիալական արժեքները և այլն:

Ն. Ժուրավլյովան արժեքային կողմնորոշումների ձևավորման կարևոր նախապայման է համարում վաղ սոցիալականացման պայմանները:

Արժեքային համակարգի ձևավորումն անհնար է պատկերացնել հասարակությունից, մարդկանց հետ շփումից զատ։Անձի արժեքների համակարգը ձևավորվում է սոցիալականաց-ման ընթացքում ինտերիորիզացիայի (ներքնայնացման)՝ հասարակական-քաղաքական, բարոյական, գեղագիտական իդեալների (հասարակական փորձ և մշակույթ) յուրացման միջոցով, որոնք բնորոշ են տվյալ սոցիալական հանրությանը։ Արժեքային համակարգի ձևավորումն ընթանում է դաստիարակության և կրթության ընթացքում սոցիալական փորձի յուրացման միջոցով։ Անձնային արժեքները ձևավորվում են սոցիալա- կանացման ամբողջ ընթացքում (Ռուչկա՝ 1976, Անանն՝ 1996, Լեոնտև՝ 1998, Սուրինա՝ 1996)։
Ժ. Պիաժեն անձի արժեքային կողմնորոշումների զարգացումը կապում է ինտելեկտուալ զարգացման մակարդակի հետ։ Նա համարում էր, որ բարոյական դատողությունների ներքնայնացումը երեխաների մոտ տեղի է ունենում զարգացող մտածողական կառուցվածքների և աստիճանաբար ընդլայնվող սոցիալական փորձի փոխազդեցության արդյունքում։

Մաս1:

Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում

Արդի մանկավարժության կարևոր պահանջներից է երեխաների արժեքային համակարգի ձևավորումը։Կրթության նպատակը անհատին ոչ միայն գիտելիքներով զինելն է,այլև նրա մեջ բարոյական որոշակի հատկանիշներ ձևավորելը։Արժեքային կրթությունը ի սկզբանե կրթության անքակտելի բաղադրիչն է եղել։ Ինչպես ամբողջ աշխարհում,Հայաստանում էլ այսօր արժեքային կրթությունը հասարակությանը հուզող խնդիրներից մեկն է։ Մեզանում արժեքային կրթության նկատմամբ ավանդաբար ընդունված է հետևյալ մոտեցումը.դպրոցն ու ծնողները փորձում են բարոյական ժառանգությունը փոխանցել նոր սերնդին՝նրանց մեջ լավ արժեքներ սերմանելով և հաստատելով բարոյական այլևայլ հատկանիշների ճշմարտացիությունը։ Արժեքային կրթության նոր՝արևմտյան մանկավարժության մեջ մշակված մոտեցման հիմքում

մտածական հմտությունների ձևավորման սկզբունքն է: Ըստ սրա՝ աշակերտներին պետք է օգնել իմաստավորելու որոշակի արժեքներ,այսինքն՝նրանց պետք է խրախուսել սեփական կենսափորձի և զանազան հարցադրումների միջոցով որոշել, թե իրենք ինչպիսի մարդ են ուզում դառնալ,ինչպիսի ավանդույթներ արժե պահպանել: Անշուշտ այս երկու մոտեցումներն էլ խոցելի կողմեր ունեն:Առաջինը երբեմն զուտ քարոզչական և ձևապաշտական բնույթ է ձեռք բերում. երեխաները լսում են,թե որքան լավ բան է ազնվությունը,արդարությունը,տարեցների նկատմամբ հոգատարությունը և այլն,սակայն կյանքում տեսնում են արժեքների խախտումն իրենց ուսուցիչների,ծնողների կամ շրջապատողների կողմից:Բնական է,որ այդ դեպքում դրանք վերացական արժեքներ են մնում և նրանց կերպարի մաս չեն դառնում:Մյուս կողմից էլ՝ նոր մոտեցումը շատ ազատական է, և վտանգ կա, որ անձնական ազատ ընտրության և բարոյական ընդունված արժեքների ու պարտավորությունների միջև նախապատվությունը կտրվի առաջինին: Ուստի երեխաների մեջ համապատասխան արժեքներ ձևավորելու համար շատ կարևոր է այս մոտեցումների խելամիտ միահյուսումը:Արժեքները երեխաներին ներկայացվում են առաջին հերթին գրական,պատմական հերոսների օրինակով,նաև ուսուցչի վարքագծով:Ուստի շատ կարևոր է առանձնահատուկ ուշադրություն դարձնել դասագրքերի նյութերին,ինչպես նաև ներկայացված հերոսների վարքագծի վերլուծությանը և դրա միջոցով որոշակի արժեքների բացահայտմանը:Սակայն վերլուծությունը ենթադրում է առաջին հերթին երեխաների գործուն մասնակցություն,այսինքն՝աշակերտները պետք է հնարավորություն ունենան ազատորեն արտահայտելու իրենց կարծիքը,զգացմունքները, որոշակի հարցադրումներ անելու,ընկերների հետ քննարկելու,դատողություններ անելու հերոսների վարքագծի մասին,գնահատելու և իրենց համար բացահայտելու այս կամ այն արժեքը: Օրինակ՝<<Օշականյան հյուրընկալություն>> տեքստն ընթերցելուց հետո աշակերտները պետք է բնութագրեն հեղինակին,լեհ լրագրողին,նրանց հյուրընկալող հայ գյուղացիներին: Աշակերտներին հարց է ուղղվում՝ինչը դուր եկավ,ինչը դուր չեկավ:Եվ նա ազատ է իր կարծիքը հայտնելու. չի բացառվում,որ ոմանք բացասական գծեր տեսնեն լրագրողի,նրա հայ ուղեկցի,նույնիսկ հայ գեղջկուհու նկարագրի մեջ: Մյուս կարևոր սկզբունքն այն է,որ արժեքը պետք է սովորել ոչ թե լսելով,այլ կիրառելով:Ուստի պետք է նրանց հնարավորություն տալ կիրառելու իրենց սովորած արժեքը,այն ձեռք բերել իրենց իսկ փորձառության հիման վրա:Դրա համար,անշուշտ, պետք է ընտրել գործունեության այնպիսի ձևեր,որոնք համապատասխանում

են երեխաների տարիքին: Շատ կարևոր է նաև խրախուսանքը:Խրախուսելով երեխային կարելի է ոգեշնչել,մղել որոշակի գործողությունների,ազդել նրա զգացմունքների վրա և այդպես նպաստել նրա մեջ որոշակի արժեքի ամրապնդմանը:Մայրենի լեզվի ուսուցման ընթացքում կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման բովանդակային բաղադրատարրը բնութագրվում է մայրենի լեզվի առանձնահատկություններով: Հետազոտվող հիմնախնդրի տեսանկյունից դիտարկվում են այն արժեքները,որոնք դրսևորվում են՝

Լեզվի գործառույթներում,

Տարրական դպրոցում լեզվի ուսուցման նպատակներում:

Լեզվի հիմնական գործառույթներն են՝ հաղորդակցական, ճանաչողական, տեղեկատվական, ներազդման,նշանակողական,ազգային մշակութային ավանդույթների պահպանման ու փոխանցման,մտքերի ձևավորման ու արտահայտման,հուզական և այլն: Հաղորդակցական գործառույթը ենթադրում է խոսքային հաղորդակցում:Տարրական ուսուցման համակարգում այս գործառույթի իրականացումը նշանակում է ուսումնասիրվող գործընթացի բովանդակության մեջ այնպիսի արժեքների դիտարկում,որոնք արտահայտվում են փոխադարձ շփման,բարեկիրթ հաղորդակցման ընթացքում: Շփման ու հաղորդակցման արժեքային կողմը բնութագրում է մարդու՝ այլոց հետ համակեցության,սոցիումում դրսևորվելու,մարդկանց հետ շփվելու պահանջմունքը:Այս պարագայում հատուկ նշանակություն են ձեռք բերում խոսքային հաղորդակցման մշակույթը,լեզվական միջոցներով զրուցակցի վրա ներգործելու ունակությունը: Հաղորդակցական կարողության դրսևորումն այն է, որ կրտսեր դպրոցականը կարողանում է լսել, ընկալել, բանավիճել, համարժեք վերաբերմունք արտահայտել և տրամաբանված խոսք կառուցել: Ըստ Ս.Տ. Մասլովի՝ շփման ու հաղորդակցման արժեքները վերաբերում են արժեքների սոցիալական խմբին: Քաղաքավարությունն ու բարեկրթությունը՝ որպես արժեքային հասկացություններ,բնութագրում են անձի՝ շրջապատող մարդկանց նկատմամբ հարգալից հարաբերություններ ձևավորելու ձգտումը: Այս հատկանիշը թույլ է տալիս դրանք ներառել բարոյական արժեքների խմբում: Քաղաքավարությունն ու բարեկիրթ վերաբերմունքը դրսևորվում են խոսքային հաղորդակցման մշակույթի, հարգալից

դիմելաձևերի, արտահայտչամիջոցների, բառապաշարի գործածման միջոցով: Տեղեկատվական գործառույթի տեսանկյունից լեզուն դիտարկվում է որպես հաղորդման, մարդկության փորձի ու իմացության, գիտակցված գործունեության ընթացքում կուտակված գիտելիքների համակարգման ու լեզվական ձևակերպման միջոց: Այդ գործառույթը ուսումնասիրվող գործընթացի բովանդակության մեջ բացահայտում է իմացական արժեքները: Գիտելիքը հասարակական փորձով ստուգված՝ իրականության տրամաբանական յուրացման արդյունքն է, որը համարժեք է մարդու գիտակցության մեջ այդ իրականության արտացոլմանը: Ազգային-մշակութային ավանդույթների պահպանման ու փոխանցման գործառույթն իրականացնում է ժամանակների միջև կապը, որը հնարավորություն է ընձեռում լեզվի մեջ պահպանել ազգային մշակույթը և փոխանցել սերնդեսերունդ: Այն դրսևորվում է սոցիալական, իմացական, գեղագիտական արժեքների ձևով: <<Ազգ>> և <<ժողովուրդ>> հասկացությունները դիտարկվում են որպես միասնական, ամբողջական, պատմականորեն ձևավորված էթնիկ հանրություն:Ազգային արժեքներին հաղորդակցվելը նախնիների ավանդույթները պահպանելու, շարունակելու, դրանց հավատարիմ մնալու համոզմունք է, ինչպես նաև սեր հայրենի բնօրրանի հանդեպ:Անձի համակողմանի ու ներդաշնակ ձևավորումն սկսվում է այն ըմբռնումից, որ ազգային մշակույթը ժողովրդի պատմական հիշողության մեջ հազարամյակների ընթացքում խտացած արժեքների շտեմարան է: Ազգային մշակույթն արտացոլում է լեզվի հարստությունը, պատկերավորությունը, արտահայտչականությունը և գեղեցկությունը: Գեղեցիկը ըստ Ս. Ի. Օժեգովի, մարմնավորում է այն ամենը, ինչը գեղագիտական վայելք է պարգևում: Գեղագիտական օրենքներին համապատասխանությունը դրսևորվում է ներդաշնակության մեջ. Լեզվում ներդաշնակությունն արտահայտվում է գրականության, հատկապես բանահյուսության մեջ: Շփման գործառույթը ենթադրում է համամարդկային մշակույթի յուրացում՝ հատկապես գեղարվեստական ստեղծագործությունների թարգմանությունների միջոցով: Այն ընդլայնում է արժեքների սահմանները՝ սոցիալական հանուր մարդկության արժեքները, իմացական գիտելիքը որպես համամարդկային մշակույթի արտահայտություն, գեղագիտական գեղեցկությունն ու ներդաշնակությունը, խոսքի գեղագիտությունն ու մշակույթը՝ որպես արժեք:Հուզական գործառույթը կապված է հույզերի և զգացմունքների արտահայտման հետ: Հուզական ներգործության առավելագույն հնարավորություններով են օժտված գեղարվեստական

կերպարները:Հուզական գործառույթը կարևոր դեր ունի նաև առօրյա շփումներում : Այն նպատակաուղղված է բարոյական, հուզական արձագանքը՝ որպես արժեք, և գեղագիտական գեղեցիկի զգացումը՝ որպես արժեք, արժեքներին հաղորդակցմանը:Հուզական զգայունակությունը, կարեկցանքը, ապրումակցումը, անձի, այլոց նկատմամբ կարեկցական վերաբերմունքի դրսևորումներ են: Ա պրումակցումը ենթադրում է անձի հուզական այնպիսի վիճակներ ու ապրումներ,որոնք նա տածում է դիմացինի նկատմամբ' նրա հուզական հոգեվիճակի նույնականացման հիման վրա:Գթասրտությունն արտահայտվում է այլոց դժբախտության և խնդիրների նկատմամբ զգայուն վերաբերմունքի միջոցով:Կարեկցանքը անձի; այլոց զգացմունքների նկատմամբ համարժեք ապրումն է: Խոսքային ներգործության գործառույթը ենթադրում է որևէ մեկին որոշակի արարքի մղելու խնդրանք, հորդոր, հրաման, դրդում:Այսինքն' այն արտահայտում է խոսողի կամային վերաբերմունքը: Այս գործառույթը ենթադրում է, որ սոցիալական միջավայրը ընկալվում է որպես արժեք:

Մտքերի ձևակերպման և արտահայտման գործառույթը նշանակում է,որ ցանկացած միտք հնչյունային թաղանթ և արտահայտություն է ստանում:Այս գործառույթի իրականացումը ենթադրում է իմացական մտածողությունը,մտքերը ձևակերպելու և արտահայտելու կարողությունը՝ որպես արժեք և գեղագիտական մտքերի գեղեցիկ և ներդաշնակ ձևակերպումը՝որպես արժեք, արժեքներին հաղորդակցում:Անձի վարքում դրսևորվող լեզվի կարգավորիչ գործառույթն արտահայտում է նախատեսվող գործողությունների հաջորդական իրականացումը, մարդկային փոխհարաբերությունների, կենցաղի և բարոյական հարաբերությունների կազմակերպումն ու կարգավորումը:Այն նպաստում է բարոյական արժեքների յուրացմանը:Դրանք հատկապես այն արժեքներն են, որոնք վերա - բերում են այլ մարդկանց նկատմամբ հարաբերություններին, բարեկիրթ հաղորդակցմանը, վարվելակերպին, հասարակության մեջ վարվելաձևին, խոսքի մշակույթին,իր խոսքի նկատմամբ պատասխանատու վերաբերմունքին:Լեզվի հիշյալ գործառույթների հաշվառումը և տարրական դպրոցում լեզուների ուսուցման գործընթացում էապես կարևորվող արժեքների բացահայտումը դիտարկվում են լեզվական առարկաների ուսուցման նպատակների համատեքստում:Դրանք պետք է համապատասխանեն նաև ուսումնական առարկաների հիմնական գործառույթներին և արժեքային համակարգի ձևավորման գործում ունեցած նշանակությանը:Ուսումնական առարկաների դասակարգումն ըստ գործառույթային առանձնահատկությունների դիտարկվել է

Վ.Ս.Լեդնևի,Ի.Կ.Ժուրավլյովի, Ս.Ի. Մասլովի հետազոտություններում:Դրանց արդյունքները սահմանում են կրթական համակարգում լեզվական բնագավառի առարկաների հիմնական գործառույթները և դերը:Ըստ Վ.Ս.Լեդնևի' ուսումնական յուրաքանչյուր առարկա զարգացնում է աշակերտի անձի որևէ կողմը, հետևաբար ուսումնական առարկաների հուզական արժեքային բաղադրատարրի բովանդակությունը տարբեր է' ըստ դրանց դերի և գործառույթների: Այս տեսանկյունից հետազոտողների կողմից առաջարկվել են ուսումնական առարկաների դասակարգումներ' ըստ դրանց գործառույթների:Մայրենի և օտար լեզուների ուսումնական առարկաներում, ըստ Վ.Ս.Լեդնևի, առանձնացվում են հաղորդակցման գեղագիտական կողմերը' ընթերցանության համար նախատեսված գեղարվեստական տեքստերի հիման վրա:Չնայած դասակարգման բազմաթիվ մոտեցումներին' հետազոտողները միասնական են այն հարցում,որ լեզուների բնագավառի առարկաներն իրականացնում են տարբեր գործառույթներ:Այսինքն' այդ առարկաներից յուրաքանչյուրը անձի արժեքային կողմնորոշումների ձևավորման տեսանկյունից ունի իր առանձնահատկությունները: Տարրական դպրոցում լեզուների ուսուցման կառուցվածքն ու բովանդակությունը միասնական են. Դա թույլ է տալիս եզրակացնել, որ լեզուների ուսուցումն այստեղ ինտեգրվող համակարգ է: Այսպես, օրինակ, մայրենի լեզվի դասն ինտեգրվում է գեղարվեստական ընթերցանության դասի հետ' ուսումնական ձեռնարկներում գեղարվեստական տեքստերի ներմուծմամբ: Գեղարվեստական տեքստերի բովանդակության ներգործությունը կրտսեր դպրոցականի ներաշխարհի վրա պատկերավոր մտածողության և հուզական ընկալման շնորհիվ համարժեք է քերականական առաջադրանքների կատարմանը, մանավանդ որ առաջադրանքները բխում են տեքստերի բովանդակությունից:Ընթերցանության դասերի ընթացքում ձևավորվում են սովորողների լեզվական ճաշակն ու խոսքային մշակույթը. Ստեղծվում է բարձրամշակույթ լեզվական միջավայր: Ընթերցանության տեքստերը մեծ հնարավորություն են ընձեռում դպրոցականի բառապաշարի հարստացման համար:Դա արտահայտվում է նրա գրավոր և բանավոր խոսքի մեջ,զրույցներում, գրավոր աշխատանքի տարբեր տեսակներում:Այսպիսով' տարրական դպրոցում լեզուների բնագավառի ուսումնական առարկաներից յուրաքանչյուրն ունի մի քանի գործառույթ՝

. տվյալ լեզվի տեսական հիմունքների ուսումնասիրում,

.խոսքային գործունեության իրականացում,
.իրականության նկատմամբ գեղագիտական և բարոյական հարաբերությունների ձևավորում՝ գեղարվեստական խոսքի միջոցով:

Այս գործառույթներից յուրաքանչյուրն ունի որոշակի արժեքային ներուժ, որը բացահայտում է սովորողների արժեքային կողմնորոշումների ձևավորման հիմնական ուղղությունները: Լեզվի տեսական հիմունքների ուսումնասիրման գործառույթի իրականացումն առաջին հերթին ուղղված է կրթության բովանդակության իմացական բաղադրատարրի յուրացմանը և հետևաբար բնութագրում է կրտսեր դպրոցականների իմացական արժեքների ձևավորման նշանակությունը: Լեզվական գործունեության իրականացման գործառույթը նպաստում է հաղորդակցական արժեքի ձևավորմանը, որն ընդգրկվում է սոցիալական արժեքների խմբում: Իրականության նկատմամբ գեղագիտական և բարոյական հարաբերությունների ձևավորման գործառույթն ուղղված է բարոյական և գեղագիտական արժեքների ձևավորմանը, ինչպես նաև անձի' շփման և հաղորդակցման սոցիալական արժեքների ձևավորմանը:Դպրոցական ուսուցման համակարգում ուսումնական առարկաների գործառույթները միավորվում են որոշակի նպատակներով: Քանի որ տարրական դպրոցում լեզուների ուսուցումն իրականանում է մի քանի առարկաների միջոցով,դրանց նպատակները և' մանկավարժական,և' մեթոդական հետազոտություններում միասնաբար են ներկայացվում: Այդ հետազոտությունները նվիրված են լեզուների ուսուցման նպատակների վերլուծությանն ու հիմնավորմանը:Մեթոդամանկավարժական գրականության մեջ լեզուների ուսուցման նպատակների ձևակերպման ժամանակ հիմնական ուշադրությունը հատկացվում է լեզվի գործնական- ճանաչողական կողմի յուրացմանը և դրա հիման վրա' լեզվի տիրապետմանը:

Լեզուն յուրացնել նշանակում է ապահովել իմացություն հետևյալ ոլորտներում'

1. Լեզվական,
2. Ուղղագրական-ուղղախոսական,
3. Լեզվաբանական,
4. Հաղորդակցական:

Լեզվական իմացությունը ենթադրում է լեզվի համակարգի, քերականական նյութի տիրապետում: Ուսումնառության տարիներին երեխաներն արդեն գործնականում տիրապետում են լեզվին: Լեզվական իմացությունը նշանակում է տվյալ լեզվի բառապաշարի, լեզվական և դարձվածքային միավորների իմացություն, բառակազմական ձևաբանական, շարահյուսական, ոճական, գրականագիտական գիտելիքների ձեռքբերում, լեզվի քերականության յուրացում, գեղարվեստական տեքստերի վերլուծություն:Ուղղագրական – ուղղախոսական բանիմացությունը ուղղագրական նորմերի համակարգի վերաբերյալ գիտելիքն է, ուղղագրական – ուղղախոսական կանոնների և նորմերի յուրացումը, որն ապահովվում է ուղղագրական գրագիտության բարձր մակարդակը:Լեզվաբանական իրազեկությունը ներառում է լեզվաբանության հիմունքների վերաբերյալ գիտելիքները, լեզվաբանական հասկացությունների յուրացումը, ճիշտ և տեղին գործածությունը:Հաղորդակցական իրազեկությունը ենթադրում է խոսքային գործունեության բոլոր տեսակների, հաղորդակցական մշակույթի տիրապետում:Մայրենիլեզվի ուսուցման նպատակների այսօրինակ դիտարկումն ուղղված է առաջին հերթին ուսումնական տվյալ բնագավառին ներհատուկ գիտելիքների, կարողությունների, հմտությունների յուրացմանը, հետևաբար չի կարող լիարժեքորեն լուծել կրտսեր դպրոցականների զարգացման և արժեքային համակարգի ձևավորման բոլոր խնդիրները:Կ.Դ.ՈՒշինսկին, որպես լեզվի ուսուցման առաջնային նպատակ, դիտարկել է երեխայի անձի զարգացումն ու դաստիարակումը, մայրենի լեզվի նկատմամբ սիրո և հետաքրքրության ձևավորումը, խոսքի մշակույթի զարգացումը, հատկապես մայրենիի զգացողությունը: Տեսական դասընթացի յուրացումը, տվյալ լեզվի համակարգի վերաբերյալ գիտելիքների ձեռքբերումը նպատակներ են, որոնք ապահովում են երեխայի դիրքորոշումները: «… Երեխան, ուսումնասիրելով մայրենի լեզուն, միայն պատմական հնչյուններ չէ, որ սովորում է, այլև հոգևոր կյանք և ուժ է ըմպում մայրենի լեզվի մայրական կրծքից»,- գրում է Կ.Դ.ՈՒշինսկին:Ի հաստատումն մանկավարժական նման մոտեցման ' վերջին տարիներին լեզուների ուսուցման նպատակներին նվիրված հետազոտություններում շեշտադրվում են կրտսեր դպրոցականների զարգացման խնդիրները' հատկապես մտավոր զարգացման, լեզվական մշակույթի բարձր մակարդակի, գեղագիտական ճաշակի ձևավորման և բարոյական կատարելագործման տեսանկյունից: Տարրական դպրոցում լեզվի

գործառույթներին լեզուների ուսուցման նպատակների համապատասխանությունը իր արտացոլումն է գտնում կրթության բովանդակությանը ներկայացվող պահանջներում: Տարրական դպրոցում լեզուների ուսուցումն ուղղված է հետևյալ հիմնական նպատակների իրականացմանը'

1. Կրտսեր դպրոցականների իմացական զարգացում, մայրենի լեզվի վերաբերյալ գիտելիքների, ունակությունների, դրանց օրինաչափությունների ու փաստերի վերլուծության և ընդհանրացման փորձի ձևավորում:

2. Կրտսեր դպրոցականի խոսքի զարգացում,նրանց մեջ խոսքային գործունեության հիմնական տեսակների ձևավորում,խոսքային հաղորդակցման մշակույթի դաստիարակում,որն ընկալվում է իբրև երեխաների հաղորդակցում սոցիալական արժեքներին:

3. Կրտսեր դպրոցականների գեղագիտական ճաշակի ձևավորում. լեզվի ուսուցումը զուգորդվում է գեղագիտական արժեքների յուրացմանը: Մայրենի լեզվի ուսուցման գործընթացում յուրացվում են հետևյալ արժեքները՝

• Գեղագիտական՝ խոսքի գեղեցկության և ներդաշնակության ընկալում,գեղագիտական հույզերի և ապրումների դրսևորում,գեղագիտական ճաշակի ձևավորում,
• Բարոյական՝ մարդկանց և շրջապատող աշխարհի փոխհարաբերությունների, երևույթների ու իրադարձությունների համարժեք ընկալում:
Կրտսեր դպրոցականների զարգացման իմացական-ճանաչողական և հաղորդակցական գործունեությունը նպաստում է նրանց իմացական ու սոցիալական արժեքների ձևավոր-մանը,իսկ բարոյական և գեղագիտական արժեքները հիմնականում ձևավորվում են ընթեր-ցանության համար նախատեսված գեղարվեստական նյութերի ուսուցման ընթացքում:
Ընդհանուր առմամբ արժեքային համակարգի ձևավորումը երեխաների մոտ,նպատակ ունի ձևավորել անձ և քաղաքացի, որը պետք է՝
1. Գիտակցի սեփական մշակույթի՝ լեզվի,պատմության,արվեստի,ավանդույթների,ազ-գային այլ արժեքների կարևորությունն ու նշանակությունը և լինի դրանց կրողը:
2. Հարգի Հայաստանի պետական խորհրդանիշները,լինի հայրենասեր,կարևորի ազգային

հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտութ- յունը:

3. Գիտակցի,որ գիտությունը , արդիական տեխնոլոգիաները , կրթությունը մեծագույն արժեքներ են ժամանակակից աշխարհում.

4. Գիտակցի,որ իր համար կարևորագույն արժեքներ են գիտելիքները , աշխատանքային հմտությունները, մասնագիտական վարպետությունը.

5. Կարևոր բարոյական չափանիշները և քրիստոնեական ու համամարդկային արժեքները,լինի ազնիվ, գթասիրտ, արդարամիտ, օրինապահ, բարեկիրթ.

6. Կարևորի գեղագիտական արժեքները , գնահատի գեղեցիկը, բարին և ճշմարիտը.

7. Գիտակցի իր տեղն ու դերը ընտանիքում և հասարակության մեջ , լինի նախաձեռնող, դրսևորի արժանավայել պահվածք.

8. Գիտակցի ծնողների, տարիքով մեծերի և փոքրերի, ընկերների և համայնքի նկատմամբ հարգանքի դրսևորման կարևորությունը.

9. Հարգի մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները, լինի մարդասեր,հանդուրժող, քաղաքակիրթ վերաբերմունք դրսևորի ուրիշ ժողովուրդների ներկայացուցիչների և նրանց մշակույթների հանդեպ.

10. Անաչառորեն գնահատի իր ուժերն ու կարողությունները' բացառելով սեփական անձի թերագնահատումը կամ գերագնահատումը.

11. Դրսևորի աշխատասիրություն , հնարամտություն, նպատակադրվածություն, արժևորի ու գնահատի սեփական և այլոց աշխատանքը.

12. Մշտապես հոգ տանի իր առողջության մասին, կարևորի մարմնակրթության դերը հետևողական լինի առողջ ապրելակերպի և անվտանգ կենսագործունեության կանոնների կիրառման գործում:

Մաս 2:

Կրտսեր տարիքում բարոյագիտական պատկերացումների ձևավորումը խաղերի միջոցով

Մարդկային արժեքներին երեխայի հաղորդակցման հիմք են հանդիսանում բարոյագիտական առանձնահատուկ գիտելիքները և ուսուցման ողջ համակարգի դաստիարակչական –

բարոյագիտական ուղղվածությունը: Երեխային այդպիսի հնարավորություն է ընձեռնում խաղը, որի միջոցով ի հայտ է գալիս համագործակցության ու փոխօգնության իրական արժեքը: Խաղի ընթացքում տեղի է ունենում ակնկալիքների ճշտում, որոշ արարքների իմաստի գիտակցում , տրվում է ընդունված որոշումների արդարացի գնահատականը, և լուծվում են վեճերն ու կոնֆլիկտները:

Խաղային գործընթացը մեր կողմից դիտարկվում է որպես վարքի փորցառության հավաքագրման, կշռադատման ընդհանրական միջոց, երեխայի բարոյական և սոցիալական ձգտումների հիմնական բաղկացուցիչների ձևավորում:Խաղի ընթացքում տիրապետող է զգայական այնպիսի մթնոլորտը, որը նպաստում է երեխայի ապրումակցային խառնվածքի, այն է՝ ուշադրության , նրբազգացության, հոգատարության, պատրաստակամության, բարյացկամության, արդարացիության ձևավորմանը: Այս ամենը միավորում է Բարություն հասկացության մեջ:Խաղը երեխային դարձնում է գործուն սուբյեկտ, նպաստում անվստահ, կախյալ, վախկոտ երեխաների անհատական աճին և զարգացմանը: Զգայական, զարգացնող, գեղարվեստական և դերային խաղերը երեխայի համար համարվում են իր իսկ ուսուցման և դաստիարակման համակարգաստեղծ բաղկացուցիչների մի մասը: Մշակվել է խաղերի մի ամբողջ համակարգ, որն ապահովում է տարիքային բոլոր խմբերի երեխաների բարոյագիտական մշակույթի դաստիարակման գործընթացի համընդհանուր գիծը: Նախապատվությունը տրվում է այն խաղերին, որոնք սովորեցնում են, ամրապնդում, վարժեցնում և արտացոլում երեխաների սոցիալական փորձը: Նախադպրոցական տարիքի երեխաների բարոյագիտական դաստիարակության առաջին աստիճանում առաջատար են համարվում զարգացնող խաղերը: Դրանցից են այն խաղերը, որոնց կարևոր կառուցվածքային բաղադրիչներն են առարկաների հետ գործողության բնույթն ու կերպը, համագործակցության միջոցներն ու ձևերը, մարդկանց հետ շփումն ու նրանց նկատմամբ վերաբերմունքը: Այս խաղերի նպատակը ոչ միայն գիտելիքների սովորական փոխանցումն է,այլև երեխաների ակտիվ, գիտակցված գործունեությունը, հոգեկան որոշակի գործընթացների զարգացումը, սոցիալական կարևոր փորձի փոխանակումը: Զարգացնող շատ խաղեր են ստեղծվել մանկավարժների կողմից: Դրանց մշակումն ու խմբավորումը իրականացվել են «բարություն» բավականին տարողունակ հասկացության գործնական դրսևորումների և երեխաների անհատական առանձնահատկությունների

հաշվառմամբ:Այս առումով էապես կարևորվում են բարոյագիտական հետևյալ հասկացությունների բովանդակային բացահայտումներն ու պարզաբանումները.

Բարյացկամություն' դիմացինին հաճելին պարգևելու կարողություն հետևյալ միջոցներով.

. բարյացկամ վերաբերմունք,

. հյուրասիրություն,

. խաղալիքների առաջարկում,

. ծննդյան տարեդարձի և այլ տոների շնորհավորանքներ,

. ծառայությունների մատուցում,

. հաճոյախոսություններ:

Պատրաստակամություն' ուրիշների հետ միասին ուրախության և տխրության պահերը վերապրելու կարողություն հետևյալ միջոցներով.

. արձագանքել խնդրանքին, դիմումին և այլն,

. դժվարությունների հաղթահարման նպատակով օգնության ցուցաբերում,

. անհանգստության թոթափում' կարեկից խոսքի, միասին խաղալու,նկարելու,

Հասակակիցներից որևէ մեկի տուն հրավիրելու առաջարկներ:

Ուշադրություն'տագնապները նկատելու և հասկանալու կարողություն հետևյալ միջոցներով.

• « հեռացնել» զգայական անհանգստությունը դեմքից և ամբողջ կեցվածքից

• Ոչ ցայտուն արտահայտված անհանգստության նկատում և ընկալում,

Վատ տրամադրության, ցրվածության , գործունեության մեջ անհաջողության հաղթահարմանը միտված քայլեր:

Հոգատարություն ' օգնության ցուցաբերում հետևյալ միջոցներով.

• Կռահել օգնության կարիքը և համապատասխան գործողություններ ձեռնարկել,

• Վառ արտահայտված ցանկությամբ ցուցաբերել հոգատարություն «օգնել հագնվել, անկողին

պատրաստել, խաղալիքները հավաքել և այլն»,

• Արթնացնել որևէ առաջադրանքի կատարման ցանկություն:

Արդարություն ' հասակակիցների հետ հավասարության իրավունքների ճանաչում հետևյալ միջոցներով.

• Համագործակցությունից բխող բերկրանքի ճաշակման զգացողություն,

• Առաջատար դերի կատարման ուրախության պատճառում,

• Սեփական կարծիքը պաշտպանելու ձգտում,

• Որևէ գործընթացում բախումային իրավիճակի արդարացի լուծում:

Խաղերն ընդգրկում են տարբեր աստիճանի բարդության առաջադրանքներ, որոնք և հնարավորություն են ընձեռնում դրանք ընդունելի դարձնել ինչպես խմբի,այնպես էլ յուրաքանչյուր երեխայի համար' հաշվի առնելով նրա անհատական որակները:

Բարոյական փորձի ամրապնդմանը նպաստում են հատկապես դերային խաղերը, որոնք հատկանշվում են բեմականացման, թատեկարացման և մարզումների բաղադրիչներով: Դրանք ներառում են երեխային հոգեհարազատ ինչ-որ կենսական իրավիճակ,որը հնարավորություն է տալիս գործել և շփվել ցանկացած դերի ըջանակներում: Իրական գործնական, նմանակային-խաղային կամ պայմանական – խոսքային իրավիճակները մանկավարժի ղեկավարությամբ հնարավորություն են ընձեռնում կատարել բազմակի զգայական վարժություններ' տարբեր միջոցներով և գործողություններով:Դրանցով ամրապնդվում են բարոյագիտական պատկերացումները և փոխարկվում առավել ամուր հմտությունների ու կարողությունների:

Ինչպես զարգացնող, այնպես էլ գեղարվեստական և դերային խաղերում մեծ տեղ է հատկացվում փոքրիկների կողմից շատ սիրված խաղալիքներին, սիրելի, հասանելի, զվարճալի նյութերին « նկարներ, սխեմաներ, մոդելներ, մակետներ, փոքրիկ խաղալիքներ»: Դրանք երեխաների մեջ ցանկություն են առաջացնում մասնակից լինել հաղորդակցման գործընթացին:

Գործնական համատեքստ

Կրտսեր դպրոցականի արժեհամակարգի ձևավորման, զարգացման նպատակով անցկացրել եմ ինտելեկտուալ խաղ_ վիկտորինա: Քանի որ նկատել էի, որ աշակերտները այդքան էլ համախբված չէին: Չին սիրում համատեղ աշխատել: Չկար առողջ մրցակցություն, նոր գիտելիքներ ստանալու ցանկություն: Այդ ամենը պատճառ հանդիսացավ, որ իրականացնեմ խաղ- վիկտորինա՝ հասկանալու համար, արդյոք կփոխվի երեխաների աշխարհայացքը,

արժեհամակարգը, սերը դեպի ուսումն ու առողջ մրցակցությունը:Խաղն իր մեջ ներառում էր տարբեր բնագավառներ և աշակերտները պատասխանելով հարցերին ընդլայնում էին իրենց մտահորիզոնը, աշխարհայացքը այդ առարկաների, երևույթների վերաբերյալ: Հարցերը կազմված էին երկու մասից: Առաջին մասում մի փոքրիկ պատմություն էր, որից հետո նոր տրվում էր հարցը: Նմանատիպ հարցեր կազմելու նպատակը երեխաների մեջ նախ հետաքրքրություն առաջացնել էր, իսկ հետո ավելի շատ տեղեկություններ ստանալը: Նման օրինակներով երեխաները հարստացրին իրենց գիտելիքները, կարողությունները և հմտությունները: Խաղը ընթանում էրառողջ մրցակցությամբ, դա ևս շատ կարևոր է: Բոլոր խմբերը ստացան մասնակցության պատվոգրեր, իսկ հաղթող թիմը՝ <<Հանրագիտարաններ>>:

Խաղի կառուցվածքը՝

Դասարանը բաժանվել էր հինգ խմբի, յուրաքանչյուր խմբում վեց աշակերտ: Բնագաբառները վեցն էին ՝ մայրենի, մաթեմատիկա, ես և շրջակա աշխարհը, կերպարվեստ, երաժշտություն, գաղտնիք: Յուրաքանչյուր բնագավառ իր մեջ ներառում էր հինգ հարց: Ամեն խումբ ընտրում էր տվյալ բնագավառից մեկական հարց , տրվում էր ժամանակ և պետք է պատասխանեին հարցերին: Աշակերտներին նախապես տեղեկացրել էի ընդհանուր բնագավառներին, նրանք պետք է պրպտեին, գտնեին, պատրաստվեին խաղին; Այս ամբողջ ընթացքում աշակերտները ոչ միայն զինվեցին գիտելիքներով, այլև սովորեցինք համախմբված աշխատել, քննարկել, շփվել: Խաղը նպաստեց դրական մթնոլորտ ստեղծելուն ու պահպանելուն:

Վստահ կարող եմ ասել, որ խաղը նպաստեց երեխաների արժեհամակարգի թե՛ ձևավորմանը, նթե՛ զարգացմանը:

«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

Եզրակացություն

Այսօր հանրակրթական դպրոցում հաճախ ենք բախվում աշակերտների ճանաչողական ակտիվության անկման և ուսման մոտիվացիայի բացակայության լուրջ խնդրին: Աշակերտի մոտիվացիայի խթանման խնդիրը ուսուցչից պահանջում է խնդրի լուծման նոր մոտեցումներ, մասնավորապես՝ ուսուցման նոր, ավելի կատարելագործված մեթոդական միջոցների և կազմակերպչական ձևերի մշակում: Պետք է միշտ հիշել, որ ուսուցման գործընթացում կարևոր են ոչ միայն գիտելիքները, այլ նաև այն տպավորությունները, որոնցով երեխան գնում է դասից: Կոնկրետ մոտիվները, որոնք երեխային ստիպում են սովորել, որոշում են այն, թե ինչպես կյուրացվի և ինչ կդառնան ձեռք բերված գիտելիքները նրա համար: Յուրաքանչյուր ուսուցիչ ցանկանում է, որ իր աշակերտները լավ սովորեն, հետաքրքրությամբ և ցանկությամբ հաճախեն դպրոց: Դրանում շահագրգռված են նաև աշակերտների ծնողները: Սակայն շատ հաճախ թե՛ ուցուցիչները, թե՛ ծնողները մեծագույն ափսոսանքով արձանագրում են այն փաստը, որ երեխան չի ուզում սովորել, կամ թե՝ կարող է շատ լավ սովորել, բայց ցանկություն չունի: Սակայն ժամանակակից ուսուցիչն իրավունք չունի միայն արձանագրելու այդ փաստնու վերջ: Պետք է կարողանալ պարզել, թե ինչու չի ուզում սովորել, մոտիվացիայի ինչպիսի կողմեր նրա մոտ չեն ձևավորվել, երբ և որ դեպքերում չի ուզում սովորել, որտեղ են մեծերը թերացել և չեն սովորեցրել նրան ինչպես կազմակերպել վարքը, որպեսզի նրա մոտ ծնվի սովորելու մոտիվացիա: Նման դեպքերում մենք առնչվում ենք այն փաստի հետ, որ սովորողի մոտ չի ձևավորվել գիտելիքների պահանջ և չկա ուսման նկատմամբ հետաքրքրություն: Այսինքն էլի ունենք արժեքային համակարգի ձևավորման խնդիր :

Ուսուցման մեջ առաջնային նշանակություն ունի սերը, հետաքրքրությունը գիտելիքի նկատմամբ: Հետաքրքիր ուսուցումը չի բացառում տքնաջան աշխատելու ունակությունը, հակառակը՝ նպաստում է դրան: Սովորողների մոտիվացիան մեծ հաշվով կախված է ուսուցման յուրաքանչյուր փուլում մանկավարժի նախաձեռնողական դիրքորոշումից: Այդ դիրքորոշման բնութագիրն է հանդիսանում մանկավարժական քննախույզ մտածելակերպի բարձր մակարդակը, խնդրահարույց ուսուցման, աշակերտների հետ երկխոսության մեջ մտնելու, սեփական հայացքները հիմնավորելու, մանակավարժական գործունեությունն ինքնագնահատելու ունակությունը և ձգտումը:

«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

Գրականություն

1. Բաբանսկի Յու Պոբեդանոսցե Գ. Ա. , Աշակերտների դաստիարակությանը կոմպլեքսային մոտեցում, Երևան, 19877թ 112էջ:

2. Մուդրիկ Ա. Վ., Դպրոցականի անձը և նրա դաստիարակությունը կոլոկտիվում, Երևան, 1986թ., 86էջ:

3. Սոխումլինսկի Վ. Ա., Սիրտս նվիրում եմ երեխաներին, Երևան 1977թ. 317էջ:

4. Ա.Ե. Օշլանիկովա, Հույզեր և դաստրարակություն, Երևան, 1985թ., 84էջ:

5. Ա Գևորգյան , Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում. Երևան 2002թ.:

«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ